# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

**EU4 INDEPENDENT MEDIA**

**Իրականացման ժամանակահատված:** 03.01.2022 - 02.05.2025

**ԱԼԳ երկրներ:**

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

**ԵՄ ներդրում:** € 7 999 610

**Ընդհանուր բյուջե:** € 7 999 610

**Իրականացնող կազմակերպություն(ներ):**

DT-Global leader of the consortium, WAN IFRA, The European Journalism Centre

**Նախագծի նկարագրություն:**

Արեւելյան գործընկերության երկրներում իրենց գոյությունը պահպանող անկախ լրատվամիջոցները պայքարում են իրենց եկամտի աղբյուրներից զրկող անբարեխիղճ մրցակցության, քաղաքական միջամտության եւ կառավարման անբավարար հմտությունների դեմ: Արեւելյան գործընկերության տիրույթում ժողովրդավարացմանը եւ քաղաքացիների հզորացմանն ուղղված այս ծրագիրը նպատակ ունի բարձրացնելու Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի եւ Ուկրաինայի անկախ լրատվամիջոցների շրջանում որակյալ լրագրության մակարդակը: EU4IM-ը խրախուսում է փաստերի վրա հիմնված, գենդերային գործոնն ընդգրկող եւ հանրային շահը կարեւորող վստահելի լրագրությունը, որն իրականացնում է «պահապան շան» (watchdog) գործառույթ:
Ծրագիրը նպաստում է ԶԼՄ-ների դիմակայունության բարձրացմանը՝ հզորացնելով նրանց ֆինանսական կենսունակությունը: Մեր մոտեցումը հետեւյալն է. եթե անկախ ԶԼՄ-ների լրագրողներն ունենան բարձրորակ, գրավիչ բովանդակություն արտադրելու կարողություն, ապա նրանք ավելի մրցունակ կլինեն մեդիա շուկայում, ինչը կհանգեցնի հավաստի տեղեկատվության ավելի լայն սպառման եւ հետեւաբար՝ ավելի մեծ հանրային դիմակայունության եւ կառավարության հաշվետվողականության:
Ծրագիրը ներառում է հետեւյալ գործողությունները՝ առցանց եւ դեմառդեմ թրեյնինգներ, ինչպես աշխատավայրում, այնպես էլ անհատական մենթորություն՝ բարելավելու խմբագրական բովանդակությունը կամ կառավարման եւ մարքեթինգային հմտությունները, ինչպես նաեւ զարգացնելու եկամուտների նոր հոսքեր,

**Ակնկալվող արդյունքներ:**

Արդյունք 1՝ Արեւելյան հարեւանության տարածաշրջանում փաստերի վրա հիմնված, որակյալ մեդիա բովանդակության, այդ թվում՝ հետաքննական լրագրության առաջարկի ավելացում:
Արդյունք 2՝ թիրախային լրատվամիջոցներում ավելի պրոֆեսիոնալ խմբագրական գործողություններ, ներառյալ փաստերի ստուգման բարելավված քաղաքականություն եւ լրագրողների կողմից տեղեկատվության հաղորդման որակի բարձրացում:
Արդյունք 3՝ ԶԼՄ ոլորտում գենդերային հավասարության բարելավում եւ գենդերային զգայուն մոտեցմամբ լրատվություն:
Արդյունք 4՝ կոմերցիոն լրատվամիջոցների գործունեության եւ եկամտի աղբյուրների բազմազանության հարցերով ավելի լավ պատրաստված խմբագրական եւ ղեկավար անձնակազմ:
Արդյունք 5՝ անկախ լրագրողների եւ մեդիա մասնագետների հզորացված ցանց, որն ակտիվորեն կիրառվում է որպես մասնագիտական ռեսուրսը եւ կապերը մեկտեղող հարթակ: